

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

## ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

20.03.2018թ.

ք.Վանաձոր

### Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Ս. Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ա.Աղլոյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերդյանը, Ա.Գասպարյանը, Հ.Մկրտչյանը Ն.Համբարձումյանը,, Ն.Ասրյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

### Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին /Զեկ. Ն.Սարգսյան/
2. Անկախության 100-ամյակին նվիրված միջոցառումների ընթացքի մասին /Զեկ. Տ.Բաղդոյան /
- 3.. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին /Զեկ. մարզպետի տեղակալներ, Մ.Սայադյան/
4. Կազմակերպվող «Սմարթ» դասարանների աշխատանքների մասին /Զեկ. Լ.Ասլանյան /
5. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին /Զեկ. Հ.Պապոյան/
6. Մարզային ենթակայության հիմնարկների կողմից աղբահանության պայմանագրերի ընթացքի մասին /Զեկ. Ս.Լամբարյան, Մ.Սայադյան/
7. Սուբվենցիոն հայտերի մասին /Զեկ. Հ.Մկրտչյան/
8. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված ցանկերում ընդգրկված ֆիզիկական անձ հանդիսացող սուբյեկտների վերաբերյալ թերի տվյալները համայնքների կողմից լրացնելու (ամբողջականացնելու) աշխատանքների վերաբերյալ: /Զեկ. Ա.Օհանյան/
9. ա) Մարզի համայնքներին պարարտանյութերի և սերմացուների բաշխման գործընթացի մասին:  
բ) Նոր կարգով սահմանված անասնաբուժական ծառայությունների իրականացման ընթացքի մասին /Զեկ. Գ.Հակոբյան/

Այլ հարցեր

### Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց.

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բաղդոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման

**վարչության պետ Հ. Պապոյանին, , ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝**

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և վերահսկողություն սահմանել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման եռամսյակային պլանների կատարման ուղղությամբ:

**2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Տ.Քաղոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝**

Անկախության 100-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրերն ամփոփելուց հետո ներկայացնել տեղեկատվություն և վերահսկել դրանց կատարման ընթացքը ամբողջ տարվա ընթացքում:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝**

Մարզային ենթակայության կառույցների հետ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել, վերջիններիս կողմից համայնքների ղեկավարների հետ աղբահանության պայմանագրերի կնքման, վարձավճարների սահմանման և վճարների մուծման ուղղությամբ:

**4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝**

Գույքագրել և ըստ դպրոցների ներկայացնել տեղեկատվություն «Սմարթ» դասարանների ստեղծման ֆինանսավորման, պայմանագրերի կնքման և ծախսերի վերաբերյալ:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝**

Ամենօրյա վերահսկողություն սահմանել «Սմարթ» դասարանների գործունեության նկատմամբ և դրանց աշխատանքի արդյունավետության վերաբերյալ ներկայացնել ամենամսյա տեղեկատվություն:

**6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝**

ա/ Սերմացուների և պարարտանյութերի բաշխման գործընթացը ճիշտ կազմակերպելու և վերահսկելու նպատակով մարզի համայնքներին տրամադրել գումարների հավաքագրման հաշվեհամարները և պարարտանյութերն ու սերմացուները հատկացնել միայն նշված հաշվեհամարներին փոխանցումները կատարելուց հետո:

բ/ Անհրաժեշտ աշխատանքներ տանել մարզի համայնքներում անասնաբուժական ծառայությունների նոր կարգով իրականացման ուղղությամբ:

**7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝**

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված ցանկերում ընդգրկված ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալների ճշգրտումները իրականացնելու նպատակով համատեղ աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների ու համապատասխան կառույցների հետ ու մեկամսյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ